

ԿԱՐԾԻՔ

ՎԱՀԵ ՀԱԿՈՒԲԻ ՀԱԿՈՒՅԱՆԻ

«ԻԲՐԱՀԻՍ ԱԼ-ՀԱԼԱԲԻԻ «MULTAQA AL-ABHUR» («ԾՈՎԵՐԻ ՄԻԱԶՈՒԼՈՒՄ»)
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԱՖԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ Է.00.05 «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ,
ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունը նվիրված է 15-16-րդ դարերի իրավագետ ու նորարար Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Հալաբիի Multaqa al-Ābhur» («Ծովերի միաձուլում») հայտնի աշխատության ձեռագրերի ուսումնասիրությանը:

Աշխատանքի թեման ունի գիտական արդիականություն, քանի որ առանց Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Ābhur» աշխատության ուսումնասիրության, հնարավոր չէ լիարժեք պատկերացնել ոչ միայն հանաֆիական մտքի զարգացման դինամիկան, այլև իսլամական իրավունքի ընդհանուր զարգացումը:

Իսլամական իրավունքի ֆիկհի ձևավորում և զարգացման ընթացքում ոլորտի տեսաբանները հնարավորություն են ունեցել կատարելագործելու իսլամական իրավունքի չորս հիմնական ուղղությունների՝ մազհաբների տեսական-մեթոդական և գործնական կողմերը՝ ըստ իսլամական պետության ու հասարակության զարգացման օրինաչափությունների և տրամաբանության: Իրավական մեթոդների կիրառման ճկունությամբ ու հանդուրժողականությամբ առանձնանում է հանաֆիական մազհաբը, որի հետևորդն էր 15-րդ դարի ականավոր իրավագետ և նորարար Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Հալաբին: Նա սկզբում գործունեություն է ծավալել Հալեպում, այնուհետև Կահիրեում, իսկ կյանքի վերջին շրջանում՝ Ստամբուլում, որը 16-րդ դարի սկզբին իսլամական մտքի կարևոր կենտրոն էր:

Ստամբուլում ալ-Հալաբին շփվել է իր ժամանակի հայտնի մտածողների հետ, իմամ-խատիբի ծառայություն է իրականացրել մի շարք մզկիթներում, այդ թվում՝ Սուլթան Մուհամմադ ալ-Ֆաթիհի մզկիթում: Նա հեղինակել է բազմաթիվ գիտական աշխատություններ և ուղերձներ: Ալ-Հալաբիի համբավը մեծապես կապված է «Multaqa al-Ābhur» («Ծովերի միաձուլում») անվամբ իր հայտնի աշխատության հետ, որը ծանրակշիռ ազդեցություն է ունեցել թե՛ հանաֆիական մազհաբի, թե՛ ընդհանրապես իսլամական իրավունքի ձևավորման վրա:

Իբրահիմ ալ-Հալաբին կարողացավ կատարելագործել ֆիկհի թե՛ տեսական, թե՛ գործնական ասպեկտները: Նա վերամշակեց և համակարգեց բազմաթիվ իրավական նորմեր, որոնք առնչվում էին իսլամական վարքականոնի և

հասարակական կյանքի տարբեր ոլորտներին: Այս նորմերը հետագայում ներդրվեցին իսլամական հասարակության զարգացման հիմքում և դարձան ինստիտուցիոնալ նշանակության կրող: Դրանք ոչ միայն հանաֆիական մազհաբի, այլև ընդհանուր իսլամական իրավունքի կարևոր ձեռքբերումներն են:

Աշխատանքը գրվել է սկզբնաղբյուրային և մասնագիտական նշանակություն ունեցող բազմալեզու արաբերեն, հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով գրականության հենքի վրա: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, համապատասխան ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից և բառացանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տրված են ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը, օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Ատենախոսության առաջին գլխում «Հանաֆիական մազհաբի առանձնահատկությունները սուննիական կրոնաիրավական դպրոցների համատեքստում», երեք ենթագլխով ուսումնասիրվում է սուննիական իրավական դպրոցների մեթոդաբանությունը, Աբու Հանիֆայի դերը հանաֆիականության ձևավորման մեջ և նրա դպրոցի զարգացումը, հատկապես Իբրահիմ ալ-Հալաբիի ներդրումը: Քննարկվում են ֆիկհի հիմքերը, շարիաթի ու ֆիկհի հարաբերությունը, և մազհաբների առաջացումը:

Երկրորդ գլխում «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqā al-Ābhūr» աշխատության նշանակությունն ու ազդեցությունը հանաֆիական դպրոցի զարգացման հարցում», ներկայացվում են հանաֆիական մեթոդաբանության առանձնահատկությունները իսթիհասանի և իթիքաֆի օրինակով: Ալ-Հալաբիի կյանքի և նրա «Multaqā al-Ābhūr» աշխատության քննությունը ընդգծում է վերջինիս ազդեցությունը Օսմանյան իրավական համակարգի վրա:

Երրորդ գլխում «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqā al-Ābhūr» աշխատության ձեռագրերի ուսումնասիրությունը», վերլուծվում են Մատենադարանի 1713 և «Մաուդ թագավոր» համալսարանի 6770 ձեռագրերը: Քննական համեմատությունը ցույց է տալիս բովանդակային և մեկնաբանական փոքր տարբերությունները: Աշխատության կիրառական նշանակությունը ընդգծվում է հանաֆիական իրավունքի դասավանդման և Օսմանյան դատական համակարգի համատեքստում:

Վ.Հակոբյանի ատենախոսության վերաբերյալ իմ աներկբա դրական կարծիքի հետ մեկտեղ ներկայացնում եմ նաև մեկ դիտողություն կամ առաջարկ. ցանկալի կլիներ, որ ատենախոսն իր թեզում անդրադառնար նաև Իբրահիմ ալ-Հալաբիի

«Multaqa al-Ābhur» («Ծովերի միաձուլում») աշխատության այլ ձեռագրերի և հրատարակությունների:

Վերոհիշյալ դիտողություն-առաջարկը, անշուշտ, էականորեն չի ազդում ստենախոսության արժանիքների վրա:

Օգտվելով առիթից՝ կցանկանալի ընդգծել ԵՊՀ արաբագիտության ամբիոնի բացառիկ շնորհակալ դերը Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն որակավորմամբ արաբագետների և իսլամագետների, թե պատմաբանների, և թե բանասերների պատրաստման գործում: Այսօրվա ստենախոսն էլ մեր արաբագիտության դպրոցի արժանավոր սանն է, ում արաբերենի հիմնարար իմացությունը նպաստել է թեզի շարադրմանը և բազմիցս ապացուցվել է Վահե Հակոբյան-թարգմանչի պրակտիկ գործունեության ընթացքում:

Ուսումնասիրելով ստենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակած աշխատանքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացության.

Վահե Հակոբի Հակոբյանի «Իբրահիմ ալ-Հալաբիի «Multaqa al-Abhur» («Ծովերի միաձուլում») աշխատության ազդեցությունը Հանաֆիական կրոնաիրավական դպրոցի զարգացման պատմության վրա. Ձեռագրերի համեմատական վերլուծություն» վերնագրով Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ստենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»-ին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ. գ. թ. ., պրոֆեսոր Ալեքսանդր Վիլենի Սաֆարյան

12.12.2024

պ. գ. թ. ., պրոֆեսոր Ալեքսանդր Վիլենի Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ զիտքարտուղար



Մ. Հովհաննիսյան